ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

9 դեկտեմբերի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

176
(2842)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ԴԵՖԱՆՍ ՀԱՈՒԶԻՆԳ»-Ը ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԻ



«Դեֆանս Հաուզինգ Ինվեստ» ՓԲԸ-ն , որը բնակելի շենքերի կառուցապատմամբ է զբաղվում, ֆինանսական խնդիրներ ունի: Մեր խմբագրություն են ահազանգում քաղաքացիները՝ նշելով, որ ընկերությունը բավականին մեծ պարտքեր է կուտակել, ու իրենք անհանգստացած են այդ հանգամանքով: Այս տեղեկությունը փորձեցինք պարզել «Դեֆանս Հաուզինգ Ինվեստ» ՓԲԸ-ի գրասենյակից, որտեղից ի պատասխան հայտնեցին. «Ինչ բողոքներ ներկայացրել են բնակիչները, դրանք չեն համապատասխանում իրականությանը: Մեր շինարարական աշխատանքներն ըստ ժամանակացույցի առաջ են գնում: Մենք բնակարանները արդեն ձեռք բերած մարդկանց զանգում ենք, բերում ենք շինհրապարակ, իրենք հետեւում են շինաշխատանքներին»: Հավելենք, որ մեզ հայտնի դարձավ՝ անգամ 2020 թվականին Երեւան համայնքը դիմել է Սնանկության դատարան: Իր հայցում Երեւանի քաղաքապետարանը նշել է, որ «Դեֆանս Հաուզինգ Ինվեստ» ՓԲԸ-ն, հանդիսանալով ք. Երեւան, Տիչինայի փողոց, թիվ 322 հասցեում գտնվող 110000 քմ մակերեսով հողամասի կառուցապատող, չի կատարել կառուցապատման իրավունքի համար պայմանագրով սահմանված վճարային պարտավորությունները, որի արդյունքում վերջինիս 60-օրյա ժամկետը գերազանցող դրամական պարտավորությունները Երեւան համայնքի հանդեպ կազմում են 1 133 006 ՀՀ դրամ, որից վարձավճարի պարտքը՝ 1 087 273 ՀՀ դրամ, տույժը՝ 45 733 ՀՀ դրամ, սակայն դատարանը մերժել է Երեւանի քաղաքապետարանի դիմումը: Հավելենք, որ մամուլը բազմիցս է անդրադարձել «Դեֆանս Հաուզինգ Ինվեստ» ՓԲԸ-ի սեփականատեր, նախկինում իրավապահ համակարգում գործունեություն ծավալած Կարեն Կարապետյանի գործունեությանը: Մասնավորապես՝ 2012 թվականին մամուլը գրել էր, որ խուլ հակասությունների մեջ էին «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ում 12,5-ական բաժնետոմսեր ունեցող «Զանգեզուր Մայնինգ» եւ «Արմենիա Մոլիբդեն Փրոդաքշընն» ընկերությունները: Նշված ընկերությունների «փայատերեր» Կարեն Կարապետյանի եւ Մաքսիմ Հակոբյանի միջեւ տարաձայնություններ են առաջացել հիմնականում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ֆոնի վրա՝ կապված մոլիբդենի արտադրության ու վաճառքի ցուցանիշների հետ: «Ասում են՝ երկու գործարարների շահերը բախվել են նաեւ արտահանման ծավալների շուրջ, որոնց արտադրանքի 80 տոկոսը արտահանվում է Եվրոպա, իսկ 20 տոկոսը՝ Ասիա: Ի դեպ, «Արմենիա Փրոդաքշընի» տնօրեն Կարեն Կարապետյանը, որը նախկինում իրավապահ համակարգում է աշխատել, շատ ջերմ հարաբերությունների մեջ է եղել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի հետ: Պատահական չէ, որ այս կազմակերպությունում վարչապետի ազգականներից մեկը շատ լուրջ պաշտոն է զբաղեցնում: Երկու գործարարների միջեւ ստեղծված լարվածության շուրջ մեկնաբանություն էր տվել Կարեն Կարապետյանը՝ հայտնելով. «Վայ, չէ, չէ, ի՞նչ տարաձայնություն, ի՞նչ բան. տենց բան չկա: Ախր, էդ որտեղի՞ց են տենց բաները գալիս ձեզ հասնում, տենց բաներ մի՛ արեք, մի՛ գրեք, մեզ խայտառակ մի՛ արեք»:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, քննության առնելով Գուրգեն Արսենյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերեւույթ խախտման վերաբերյալ հարուցված վարույթը, պարզեց, որ Գուրգեն Արսենյանը, ըստ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալների, 2016 թվականից հանդիսանում է «Յունիքորն Սերվիս» ՍՊԸ 100% բաժնետեր, «Յունիքորն Գրուպ» ՓԲԸ 100% բաժնետեր: Ըստ Գուրգեն Արսենյանի կողմից 2021 թվականի գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի տարեկան հայտարարագրում ներկայացրած տվյալների՝ Գուրգեն Արսենյանը հանդիսանում է «Վ-կրեդիտ 24» ՍՊԸ 13 % բաժնետեր: Վարույթը հարուցվել է այն պատճառով, որ ՔՊ-ական Արսենյանը հայտարարագրային «Յունիքորն Գրուպ» ՓԲ եւ «Վ-կրեդիտ-24» ՍՊ ընկերություններում բաժնեմասնակցության, ինչպես նաեւ իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տվյալներ չի հայտարարագրել: Հավելենք նաեւ, որ պատգամավորական մանդատը ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պատգամավորը պարտավոր է դուրս գալ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից, ազատվել առեւտրային կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնից, դուրս գալ առեւտրային կազմակերպություններից կամ դրանց կանոնադրական կապիտալում իր բաժնեմասն ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման եւ հրաժարվել առեւտրային կազմակերպություններում ուրիշի գույքի հավատարմագրային կառավարումից: Նա պարտավոր է նաեւ ազատվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցրած պաշտոնից: Սույն վարույթի ընթացքում ձեռք բերված փաստական տվյալներից, մասնավորապես՝ պատգամավոր Գուրգեն Արսենյանի կողմից պարզաբանմամբ ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ Գուրգեն Արսենյանի կողմից «Յունիքորն Գրուպ» ՓԲ, «Յունիքորն Սերվիս» ՍՊ, «Վ-կրեդիտ-24» ՍՊ ընկերություններում ունեցած բաժնեմասերը 2021 թվականի հունիսի 20-ին 5 տարի ժամկետով հանձնված են եղել հավատարմագրային կառավարման: Գուրգեն Արսենյանը պաշտոնը ստանձնել է 2021 թվականի օգոստոսի 2-ին: Չնայած այս ամենին՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը եզրակացրել է, որ ԱԺ պատգամավոր Գուրգեն Արսենյանի կողմից չեն խախտվել հանրային պաշտոնին օրենսդրությամբ ներկայացված անհամատեղելիության պահանջները:

Վերջերս «Դատալեքս» դատական տեղեկատվական կայքից տեղեկացանք, որ Երեւանի «Հաղթանակ» զբոսայգին շահագործող «Ուրախ ժամանց» ՍՊ ընկերության հիմնադիր եւ միակ սեփականատեր Թորոս Ումրիկյանի մահից հետո նրա ժառանգության եւ «Հաղթանակ» զբոսայգու շահագործման հետ կապված լուրջ զարգացումներ են տեղի ունեցել: Մասնավորապես, պարզեցինք, որ Թորոս Ումրիկյանը մահացել է դեռեւս 2021 թվականին, որից հետո նրա ավագ որդին՝ Հակոբ Ումրիկյանը, դատարաններ ներկայացրած հայցերով փորձում է իր եղբորն ու քրոջը զրկել ժառանգության իրավունքից, որպեսզի միայնակ տիրանա ամբողջ ժառանգությանը: Ուսումնասիրելով նրա կողմից դատարաններ ներկայացված հայցերը եւ դրանց ճակատագրերը՝ ակնհայտ աչք ծակեց այն հանգամանքը, որ նրա հայցերը եւ բողոքները հիմնականում լուծվում նրա օգտին: Ընդ որում, ոչ միայն ժառանգության հետ կապված, այլ նաեւ բազմաթիվ այլ հարցերում: Օրինակ՝ «Էվոկաբանկ»-ի հետ վեճը եւս լուծվել է նրա օգտին, որի արդյունքում, նա ազատվել է «Էվոկաբանկ»-ին 250.000 ԱՄՆ դոլար վարկը վճարելու պարտավորությունից, ինչը բավականին հետաքրքիր երեւույթ է: Ժառանգության հետ կապված հարցերում վիճակն էլ ավելի հետաքրքիր է: Հակոբ Ումրիկյանը փորձել է ձեւական պատճառաբանություններով հասնել նրան, որ դատարանը եղբոր ու քրոջ հայրության ճանաչման վկայականներն անվավեր ճանաչի, ինչը սկզբում չի հաջողվել, քանի որ վարչական դատարանը մերժել է նրա հայցերը, սակայն «Դատալեքս»-ից տեղեկանում ենք, որ ոչ միայն վերաքննիչ վարչական դատարանը բավարարել է այդ որոշման դեմ նրա ներկայացրած վերաքննիչ բողոքը, այլեւ Հակոբ Ումրիկյանը նաեւ իր վերաքննիչ բողոքը բավարարելու մասին որոշման դեմ է վճռաբեկ բողոք ներկայացրել, եւ այդ բողոքն էլ վճռաբեկ դատարանն է վարույթ ընդունել: Իրականում, բոլորին է հայտնի, որ վճռաբեկ դատարանը եզակի դեպքերում է բողոքները վարույթ ընդունում, եւ այդ եզակիների շարքում է հայտնվել հենց Հակոբ Ումրիկյանը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Խորհրդարանը երեկ ավարտեց իր աշխատանքները, սակայն ԱԺ պատգամավորները դեռ արձակուրդի չեն մեկնի: Նրանց համար մինչեւ տարեվերջ աշխատանքային կլինի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս ամիս դեռ 1-2 արտահերթ նիստեր են սպասվում, քանի որ օրենքի նախագծեր կան քննարկելու: Բացի այս, ՔՊ-ն դեռ վարչության եւ նախաձեռնող խմբի նիստեր պետք է անի. ուստի իշխանական պատգամավորներին ասվել է՝ քաղաքից չհեռանան, չկորչեն, որպեսզի անհրաժեշտության դեպքում գան նիստերի: Այսպիսով՝ պատգամավորների մոտ մինչեւ Ամանոր դեռ թեժ աշխատանքային են լինելու:

ԶՐՈՒՅՑ

ԿԿՀ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀՆ ՈՒ ՃՆՇՈՒՄՆԵՐԸ

Նախորդող երկու օրերին խորհրդարանը ֆնեարկում էր ԿԿՀ անդամների ընտրության հարցը:

Իշխող մեծամասնությունն ակնհայտորեն փորձում էր ճնշում գործադրել թեկնածուների, մասնավորապես՝ Հայկուհի Հարությունյանի վրա:

Վերջում էլ որոշեցին չմասնակցել քվեարկությանը, ինչի հետեւանքով խորհրդարանը երեկ այդպես էլ ԿԿՀ անդամի թեկնածուներ չընտրեց:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ զրուցել է «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ հիմնադիր Դանիել Իոաննիսյանի հետ:

-Պարոն Իոաննիսյան, նախորդող երկու օրերին խորհրդարանում քննարկվում էր Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների թեկնածուների հարցը: Երկու կին անդամներ էին առաջադրված, եւ տեսանք, որ «Քաղաքացիական պայմանագիր»-ը, օգտվելով այն հանգամանքից, որ իրենք մեծամասնություն են կազմում Ազգային ժողովում, իրենց հարցերով, հայտարարություններով ակնհայտորեն փորձում էին ճնշում գործադրել թեկնածուների վրա, մասնավորապես՝ Հայկուհի Հարությունյանի: Վերջում էլ, արհամարհական վերաբերմունք ցույց տալով, անգամ չեկան եւ քվեարկությանը չմասնակցեցին: Ի՞նչ գնահատական կտաք կատարվածին:

-Տեսե՛ք, ըստ էության, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը մի շարք բացթողումներ ունի, եւ «Քաղաքացիական պայմանագրի» ներկայացուցիչները մատնացույց էին անում այդ բացթողումները: Նաեւ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախկին նախագահն ունի որոշակի բացթողումներ՝ կապված իր ընտանիքի անդամների հայտարարագրերի հետ: Խնդիրներ կան իհարկե, բայց, մյուս կողմից, ես չեմ կարող չգնահատել այն, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախկին նախագահ Հայկուհի Հարությունյանը կարողացել է դիմադրել այն գայթակղությանը, որին որ բարձրաստիճան պաշտոնյաների մեծ մասը չի դիմանում: Այ մեկը մեր ընկերն է, մյուսը՝ եղբայրը. հարաբերությունների մեջ մտնելու մասին է խոսքը: ԱԱԾ պետի տեղակալը իրեն զանգել եւ բան է խնդրել. դա, ըստ էության, ենթադրում էր, որ հետագայում ինքն էլ կարող էր ԱԱԾ-ից որեւէ բան խնդրել: Այս երկրում շատ պաշտոնյաներ կուզենային, որ իրենց ԱԱԾ-ից ինչ-որ բան խնդրեն, որ հետո իրենք էլ կարողանային ԱԱԾ-ին ինչ-որ բան խնդրել: Կոնկրետ այս պարագայում Հայկուհի Հարությունյանը այդ ամենը մերժել է:

Ինքը չի մտել խնամի-ծանոթ-բարեկամ ձեռք բերելու տրամաբանության մեջ, ինչը, ինչ խոսք, գնահատելի է, եւ այս առումով պետք է տեսնել, թե խորհրդարանը ում կընտրի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պաշտոնին:

Եվ ո՞վ կդառնա ԿԿՀ նախագահ. որովհետեւ ես, հաշվի առնելով նախկինում եղած փորձը, վստահություն չունեմ, որ դա կլինի իրականում նորմալ, անաչառ մարդ, որն իրապես գիտակցում է այդ մարմնի անկախության կարեւորությունը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՎԱՇԻՆԳՏՈՆՆ ՈՒ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վաշինգտոնը ողջունում է Երեւանի եւ Բաքվի համատեղ հայտարարությունը, որը վստահության կառուցման կարեւոր քայլ է: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտարարություն է տարածել ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Մեթյու Միլլերը:

«Միացյալ Նահանգները ողջունում է Հայաստանի եւ Ադրբեջանի հայտարարությունը՝ 2 ադրբեջանցի եւ 32 հայ պահվող անձանց ազատ արձակման մասին: Այս հանձնառությունը վստահության ամրապնդման կարեւոր քայլ է, մինչ կողմերն աշխատում են խաղաղության համաձայնագիրն ավարտին հասցնելու եւ հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ: Մենք ողջունում ենք Ադրբեջանի նախագահ Ալիեւին եւ Հայաստանի վարչապետ Փաշինյանին Հարավային Կովկասի ժողովրդի համար ավելի խաղաղ եւ բարգավաճ ապագայի հիմքեր ստեղծելու համատեղ ջանքերի համար», - նշված է հայտարարությունում: Միլլերը հավելել է, որ Միացյալ Նահանգները կշարունակի մեծապես աջակցել տեւական եւ արժանապատիվ խաղաղության հասնելու ջանքերին: Ինչպես հայտնել էինք, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահի վարչակազմը համատեղ հայտարարություն են տարածել, համաձայն որի՝ երկու պետությունները վերահաստատում են ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության սկզբունքների հարգման հիման վրա հարաբերությունները կարգավորելու եւ խաղաղության պայմանագրի կնքմանը հասնելու իրենց մտադրությունը: Ըստ հայտարարության՝ Ադրբեջանն ազատ է արձակում 32 հայ զինծառայողների, Հայաստանի Հանրապետությունն իր հերթին ազատ է արձակում 2 ադրբեջանցի զինծառայողների:

ԸՆԴՈՒՆԵԼ Է ԴԵՍՊԱՆԻՆ

Երեկ ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն ընդունել է Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսին. այս մասին տեղեկացրին ՀՀ ԱԳՆ-ից: Հանդիպմանը քննարկվել են ՀՀ-ԵՄ համապարփակ գործընկերության օրակարգային հարցեր: ՀՀ ԱԳ նախարարը եւ ԵՄ դեսպանն ամփոփել են վերջին շրջանում Երեւան եւ Բրյուսել փոխայցելությունների, տարբեր ձեւաչափերով կայացած քննարկումների արդյունքները՝ գոհունակություն հայտնելով քաղաքական ու անվտանգային, ինչպես նաեւ ոլորտային ուղղություններով ակտիվ երկխոսության կապակցությամբ եւ նախանշելով գործընկերության խորացմանն ուղղված հետագա քայլերը: Անդրադարձ է կատարվել առաջիկայում ծրագրվող միջոցառումներին: Մտքեր են փոխանակվել ՀՀ-ում ժողովրդավարական բարեփոխումների ընթացքի եւ դրանց ԵՄ շարունակական աջակցության, ինչպես նաեւ մարդկանց միջեւ շփումների համատեքստում ընդգծվել է ՀՀ-ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ երկխոսության մեկնարկի կարեւորությունը: Հանդիպման ընթացքում Արարատ Միրզոյանը եւ Վասիլիս Մարագոսն անդրադարձ են կատարել նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացի վերջին զարգացումներին, այդ թվում՝ նախօրեին ՀՀ վարչապետի եւ Ադրբեջանի նախագահի աշխատակազմերի համատեղ հայտարարությանը, վստահության մթնոլորտի ձեւավորմանն ուղղված քայլերի իրականացմանը:

ԳՈՀ ԵՆ

ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մոսկվան գոհունակությամբ է ընդունել Ադրբեջանի Հանրապետության նախագահի վարչակազմի եւ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի համատեղ հայտարարությունը, որը հաստատում է հարաբերությունները կարգավորելու եւ երկու երկրների միջեւ խաղաղության պայմանագիր կնքելու փոխադարձ մտադրությունը:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտարարություն է տարածել Ռուսաստանի արտգործնախարարության խոսնակ Մարիա Զախարովան:

«Մենք ողջունում ենք Բաքվի եւ Երեւանի միջեւ պայմանավորվածությունը հայ եւ ադրբեջանցի զինծառայողների ազատ արձակման վերաբերյալ: Ռուսաստանը հետեւողականորեն առաջ էր մղում պահվող անձանց փոխանակելու գաղափարը՝ «բոլորը բոլորի դիմաց» սկզբունքով: Սա նպաստում է վստահության փոխադարձ ամրապնդմանը եւ նոր հնարավորություններ է բացում հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացի խթանման համար՝ Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարների՝ 2020-2022 թվականների համապարփակ եռակողմ համաձայնագրերին համահունչ: Մենք պատրաստ ենք շարունակել հնարավոր աջակցությունը ցուցաբերել տրանսպորտային հաղորդակցությունների ապաշրջափակման, սահմանի սահմանազատման, խաղաղության պայմանագրի կնքման եւ քաղաքացիական հասարակության գծով շփումների հարցում», - գրված է հայտարարությունում:

Ըստ ՌԴ ԱԳՆ-ի՝ Մոսկվան նաեւ ողջունում է Երեւանի որոշումը՝ որպես բարի կամքի ժեստ հօգուտ Ադրբեջանի հրաժարվելու իր երկրի թեկնածությունից՝ 2024 թվականի նոյեմբերին ընդունելու ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի մասնակիցների կոնֆերանսի 29-րդ նստաշրջանը, ինչպես նաեւ Բաքվի կողմից ՄԱԿ-ի «COP»-ի բյուրոյին անդամակցելու համար Հայաստանի թեկնածությանն աջակցությունը:

«Ռուսական կողմը (ՌԴ նախագահի կլիմայի հարցերով հատուկ ներկայացուցիչ Ռ.Ս.-Խ. Էդելգերիեւը) շփումներ է ունեցել Բաքվի եւ Երեւանի հետ՝ նպատակ ունենալով հասնել ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի շուրջ ընդհանուր համաձայնության», - նշված է հայտարարությունում:

Ինչպես հայտնել էինք, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահի վարչակազմը համատեղ հայտարարություն են տարածել, համաձայն որի՝ երկու պետությունները վերահաստատում են ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության սկզբունքների հարգման հիման վրա հարաբերությունները կարգավորելու եւ խաղաղության պայմանագրի կնքմանը հասնելու իրենց մտադրությունը: Ըստ հայտարարության՝ Ադրբեջանն ազատ է արձակում 32 հայ զինծառայողների, Հայաստանի Հանրապետությունն իր հերթին ազատ է արձակում 2 ադրբեջանցի զինծառայողների:

ԱՎՍՏՐԻԱՆ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է

Ավստրիան ողջունել է Հայաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունները կարգավորելու եւ խաղաղության պայմանագիր կնքելու մտադրության մասին արված համատեղ հայտարարությունը:

Այս մասին հաղորդագրություն է տարածել Ավստրիայի արտգործնախարարությունը, որում նաեւ ասված է. «Այս քայլը խթան կլինի ողջ Հարավային Կովկասի կայունության, անվտանգության եւ բարգավաճման համար: Մենք պատրաստ ենք ԵՄ-ի հետ աջակցել այդ ջանքերին»:

Հիշեցնենք՝ երեկ հրապարակվել էր ՀՀ վարչապետի աշխատակազմի եւ Ադրբեջանի նախագահի վարչակազմի համատեղ հայտարարությունը գերիների փոխադարձ ազատ արձակման մասին: Ավելի ուշ ադրբեջանական լրատվամիջոցները հրապարակել էին ազատ արձակվող հայ զինծառայողների անունները:

ԹԵԺ ՄԹՆՈԼՈՐՏ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ երեկ ՔՊ խմբակցությունն առանձին հանդիպում է ունեցել Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամի ընդդիմության թեկնածու Մանվել Բադալյանի հետ:

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել փակ քննարկումից. նախ տեղեկացանք, որ նիստը հանդարտ մթնոլորտում է անցել, ՔՊ-ականներն ագրեսիվ տրամադրված չեն եղել ու հոգեբանական ճնշում չեն գործադրել, ինչպես ԿԿՀ անդամի թեկնածու Հայկուհի Հարությունյանի հետ հանդիպման ժամանակ էր եղել:

Մեր տեղեկություններով՝ Մանվել Բադալյանը ՔՊ-ականների հետ հանդիպման ժամանակ հայտարարել է, թե «բարքեր են փոխվել», ինչը իշխանականների սրտով է եղել, Մանվել Բադալյանին էլ հաջողվել է ՔՊ-ականների «սիրտը շահել»:

Նկատելի էր նաեւ, որ ԱԺ-ում էլ նրա թեկնածության հարցի քննարկումը հանգիստ մթնոլորտում անցավ:

ԷՐԴՈՂԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, տողատակում սպառնալիք հնչեցնելով, հայտարարել է, թե Հայաստանի իշխանությունները, դասեր քաղելով վերջին իրադարձություններից, չպետք է սադրանքների դիմեն:

Այս մասին նա ասել է Հունաստանից վերադառնալուց հետո ինքնաթիռում լրագրողների հետ զրույցում:

Էրդողանի խոսքով՝ Հայաստանի շահերից է բխում օգտագործել խաղաղության հնարավորությունը եւ չընկնել «ապակողմնորոշող երկրների թակարդը»:

«Բաց մի՛ թողեք հնարավորությունը, Ադրբեջանի հետ խաղաղության վրա հիմնված հարաբերությունները լավագույն տարբերակն են Հայաստանի համար: Նրանք, ովքեր զինում են նրան, ամենակարճ ժամանակում Հայաստանը կթողնեն»,- ասել է Էրդողանը՝ ակնարկելով Ֆրանսիային:

ՃՇՏՈՒՄՆԵՐ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՎԵՏՈ ԴՐԵԼ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

ԱԺ դեկտեմբերի 6-ի հերթական նիստին ՔՊ-ական պատգամավոր Մարիա Կարապետյանը հարց ուղղեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի թեկնածու Հայկուհի Հարությունյանին. «Տիկի՛ն Հարությունյան, արդյոք Դուք երբեւէ միջազգային որեւէ կազմակերպությանը ասե՞լ եք, որ այդ կազմակերպության կամ նրա առանձին ծրագրի հետ չեք համագործակցի, եթե այդ կազմակերպությունը շարունակի աշխատել հայաստանյան փորձագետի հետ: Եթե այո, ապա արդյոք դա տեղի է ունեցել միայն մե՞կ փորձագետի առնչությամբ, թե՞ մեկից ավելի դեպքերում»:

Հարցին ի պատասխան՝ Հարությունյանը շեշտեց, որ եթե հարցը հնչեցվում է հանրային հարթակից, եւ միջազգային կազմակերպությունները իրենց վերագրելիության խնդիր չբարձրացնեն, պետք է խնդրի հստակ նշել, թե որ կազմակերպության մասին է խոսքը: Կարապետյանը, իր վրա պատասխանատվություն վերցնելով, նշեց, որ դա USAD կազմակերպությունից հիմնական ֆինանսավորումից ճյուղավորվող մեկ այլ կազմակերպության ֆինանսավորման մասին է: Փաստացի, Կարապետյանի խոսքով, ստացվում է, որ Հարությունյանը շփվել է օտարերկրացիների հետ եւ նրանց ասել է, որ եթե ինչ-որ իքս փորձագետը աշխատի իրենց մոտ, ապա Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կդադարեցնի համագործակցությունը կա՛մ այդ կազմակերպության հետ, կա՛մ դրա առանձին նախագծի:

«Շնորհակալություն ճշգրտման համար, ես նախորդիվ էլ եմ ասել, այժմ էլ կասեմ՝ ՀՀ կառավարության եւ Միացյալ Նահանգների զարգացման ծրագրի միջեւ առկա համագործակցության շնորհիվ՝ հանձնաժողովը սկսել է իրականացնել «Բարեվարքության խթանում» ծրագիրը, որը իրականացման տեսանյունից վերապահվել է ամերիկյան «Դելքսոլայն» կազմակերպությանը, որը հետագայում դարձել է «Դեքսիս» կազմակերպություն»: Ապա նշեց, որ փորձագետների հետ եթե եղել են խնդիրներ, ապա դրանք լուծվել են միմիայն քննարկման եղանակով՝ ֆինանսավորող կազմակերպության մասնակցությամբ: Խոսակցությանը միջամտելով՝ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը նիստը վարողի իրավունքով որոշեց ավելի «տնավարի» հարց ուղղել Հայկուհի Հարությունյանին: «Ուզում եմ ավելի ժողովրդական եւ ավելի պարզ լեզվով կրկնել տիկին Կարապետյանի հարցը. եղե՞լ է դեպք, երբ Դուք զանգահարել եք կամ ինչ-որ ձեւով խոսելով, հաղորդակցվելով՝ ասել եք, որ եթե այս մարդն այստեղ աշխատի, ապա մենք Ձեզ հենց չենք աշխատի: Կարճ, կոնկրետ՝ այո կամ ոչ»: Հնչեց պատասխան. «Խմբակցության հանդիպման ժամանակ էլ եմ ասել՝ ո՛չ զանգ եւ ո՛չ նման ձեւակերպում իմ կողմից չի եղել»: Սիմոնյանի բազմաթիվ հարցուփորձերին, խճճող ու ճնշող հարցերին ի պատասխան՝ Հարությունյանը կրկնում էր մի բան՝ նման ձեւակերպում չի եղել:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց ճշտել, թե ով է եղել այդ փորձագետը, որի իրավունքները ՔՊ-ականները հրապարակավ պաշտպանում էին՝ ճնշելով ԿԿ հանձնաժողովի նախկին նախագահին: Մեր իրազեկ աղբյուրները փոխանցեցին, որ հայաստանյան այդ փորձագետը «Իմ քայլը» խմբակցության նախկին պատգամավոր Համազասպ Դանիելյանն է: Իրենց նախկին գործընկերոջ իրավունքներն էին հնարավոր ու անհնարին բոլոր ձեւերով փորձում պաշտպանել ԱԺ նախագահն ու Մարիա Կարապետյանը: ArmLur.am-ը կապ հաստատեց Համազասպ Դանիելյանի հետ՝ հասկանալու, թե ինչ է տեղի ունեցել իրականում, ինչու է Հայկուհի Հարությունյանը վետո դրել իր գործունեությանը, եւ արդյոք Համազասպ Դանիելյանը՝ որպես անկախ փարձագետ, հանդես չի եկել, այլ փորձել է բարեվարքության գործընթացի մեջ քաղաքական գիծ տանել կամ քաղաքական թելադրանքներով բարեվարքության պրոցեսի մասնակցել եւ որոշ պաշտոնյաների կամ թեկնածուների մասով բարեվարքության գնահատականներ տալ քաղաքական թելադրանքով: Դանիելյանը, լսելով մեր հարցի բովանդակության նախնական տեքստը, շնորհակալություն հայտնեց զանգի համար, նշեց, որ զբաղված է, եւ անջատեց հեռախոսը:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՄԵԿՆԵՆ ՄՈՍԿՎԱ

Դեկտեմբերի 11-13-ը Հայաստանի խորհրդարանական պատվիրակությունը կգործուղվի Ռուսաստանի Դաշնություն:

«Ժողովուրդ» օրաթերթը ԱԺ-ից տեղեկացավ, որ ՀՀ ԱԺ պատգամավորները Մոսկվայում մասնակցելու են ՌԴ Դաշնային ժողովի Պետական դումայի կողմից կազմակերպված «Քաղաքական կուսակցությունների եւ դաշինքների խմբակցությունների փոխգործակցության դերն ԱՊՀ երկրների միջխորհրդարանական համագործակցության մեջ» խորագրով 4-րդ միջազգային համաժողովի աշխատանքներին:

Պատվիրակության կազմում կլինեն ինչպես իշխանական, այնպես էլ ընդդիմադիր պատգամավորները:

ՌԴ կմեկնեն ՔՊ խմբակցության պատգամավոր Ալեքսեյ Սանդիկովը, «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը, պատգամավոր Տարոն Մարգարյանը եւ «Հայաստան» խմբակցությունից Գեղամ Նազարյանը:

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ

Չնայած մամուլում տարածվող լուրերին, թե Իրաքի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպան Միսակ Բալասանյանին հետ են կանչել, դեկտեմբերի 7-ին Իրաքի Հանրապետության նախագահ Աբդուլ Լատիֆ Ռաշիդիիի Բաղդադի իր նստավայրում ընդունել է Իրաքի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպան Միսակ Բալասանյանին:

Իրաքի Հանրապետության նախագահը ընդգծել է Իրաքի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների ամրապնդման կարեւորությունը հատկապես տնտեսական, առեւտրային, տեխնոլոգիական, կրթական եւ զբոսաշրջության ոլորտներում, ինչպես նաեւ ենթակառուցվածքների եւ ծառայությունների զարգացման առումով երկու բարեկամ երկրների եւ ժողովուրդների ընդհանուր շահերը: Հանդիպման ընթացքում նախագահը դեսպանի հետ խոսել է Հայաստան կատարած այցի, ստացած տպավորությունների եւ դրա արդյունքների մասին:

Դեսպանն իր հերթին ընդգծել է Իրաքի հետ հատուկ հարաբերություններ կառուցելու եւ զարգացնելու կարեւորությունը՝ հասնելու երկու բարեկամ երկրների ընդհանուր շահերին: Դեսպանն իր խոսքում նաեւ ընդգծել է, որ Իրաքի Հանրապետության նախագահի այցը Հայաստան տեղի ձեռներեցների համար խթան կհանդիսանա ներգրավվելու ու տարբեր ոլորտներում աշխատելու իրաքյան կողմի հետ:

Հիշեցնենք, որ դեկտեմբերի 6-ին հայտնի դարձավ, որ «Քաղաքացիական պայմանագիր»-ը միակողմանիորեն խզում է «Բալասանյան դաշինք» սոցիալական կուսակցության հետ երկու տարի առաջ ստորագրած համագործակցության մասին հուշագիրը:

ԱՐԴԱՐԱՑՈՒՄՆԵՐ

ԹԱՓԱՌՈՂ ՇՆԵՐԻ ՉԼՈՒԾՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

2019թ.-ից կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի համար օրենքով քրեական պատիժ է սահմանվել, ըստ որի՝ թափառող շներին այլեւս չեն վերացնի, այլ կկատարեն ստերջացում ու վնասազերծում: Ցավոք, ստերջացման ու վնասազերծման աշխատանքները տարվում են միայն մայրաքաղաքում, իսկ մարզերում հաստատված որոշում ու հասկացվելիք գումարը բացակայում է, ըստ այդմ էլ՝ խնդիրը վերջնական լուծում չի ունենում:

«Ժողովուրդ» օրաթերթի կատարած վիճակագրության համաձայն՝ վերջին տարիներին մարդկանց վրա կենդանիների հարձակման դեպքերը շատացել են: Նախորդ տարի այդ թիվը կազմում էր 5544, իսկ այս տարի այն աճել է՝ հասնելով 6919 դեպքի: 2023թ.-ի հունվարից առ այսօր գրանցված դեպքերից 3546-ը եղել է տնային պայմաններում պահվող շների կողմից, 3253-ը՝ թափառող շների, իսկ 120-ը՝ վայրի կենդանիների կողմից: Կենդանիների հարձակումից գրանցվել են նաեւ մահվան դեպքեր. 2023թ. միայն հունիս ամսում գրանցվել է 22 շների հարձակման դեպք, հուլիսին՝ Սպիտակում, օգոստոսի 30-ին Եղեգնաձորում շների ոհմակը հարձակվել էր 4 երեխայի վրա, սեպտեմբերի 8-ին՝Արմավիրի Նորապատ համայնքում, նոյեմբերի 1-ին Արմավիր մարզի Մերձավան համայնքում շան հարձակումից մահացել է 76-ամյա կինը, վերջերս՝ դեկտեմբերի 6-ին, Արարատի մարզ Սուրենավան համայնքում շների հարձակման հետեւանքով 7-ամյա երեխան վախից ընկել էր՝ եզրաքարին հարվածելով գլուխը: Նա մահացել է:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ է հաստատել «Դինգո թիմ» հասարակական կազմակերպության հետ՝պարզելու՝որն է տարեցտարի աճող թվի պատճառները, եւ թե ինչ քայլեր են առաջարկում նրանք՝ խնդիրը վերջնականապես լուծելու համար:

«Ես ինչքան կարողանում եմ, շներին օգնում եմ, խնամում եմ: Ներկա պահին խնամում եմ մի փոքրիկ շան ձագուկ, որի փաստաթղթերը կազմելուց հետո հանձնելու եմ որդեգրման: Շունը մեղավոր չէ, նա բանականություն չունի: Այդ հարցով պետք է զբաղվեն պետական մարմինները՝ կասեցնելու շների հարձակման դեպքերը: Հարցը լուրջ խնդիր է, եւ միայն Կառավարությունը կարող է այն լուծել, բայց ոչ թե սպանդով, այլ կոնկրետ քայլերով»,- ասում է «Դինգո թիմ» հասարակական կազմակերպություն պատասխանատու Շաքե Մարգարյանը:

«Ծնողներն էլ պետք է աշխատեն, որպեսզի երեխաները չվախենան կենդանիներից: Ես ինքս աշխատել եմ ինձ վրա այնքան, որ հիմա կենդանի եմ խնամում: Ես աշխատել եմ ինձ վրա, ինձ մոտ ստացվել է, եւ համոզված եմ՝բոլորի մոտ է ստացվելու»,- եզրափակեց Շաքե Մարգարյանը: Խնդրով պայմանավորված՝ «Ժողովուրդ» օրաթերթը փորձել է կապվել Երեւանի քաղաքապետարանին կից գործող «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ի պատասխանատուների հետ, սակայն մեր զանգերը մնացին անպատասխան:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱԿ

ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է ՊԵՏԲՅՈՒՋԵ

«Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացնում են, որ ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում քննվող մի քրեական վարույթի նախաքննության ընթացքում կատարված վարութային գործողությունների եւ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային տեղեկատվության եւ ռիսկերի վերլուծության վարչության աշխատակիցների իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու նոր դեպքը: Այս մասին տեղեկացնում են ՀՀ ՔԿ-ից:

«Մասնավորապես, նախաքննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ սուրճի, ձեթի, մակարոնի եւ պարենային այլ ապրանքների առեւտրով զբաղվող «Պ.Ֆ.» ՍՊ ընկերության պատասխանատու անձինք պակաս հարկեր վճարելու նպատակով, խախտելով ՀՀ հարկային օրենսգրքի պահանջները, 2021 թվականի հունվար ամսից մինչեւ 2022 թվականի օգոստոս ամիսը ներառյալ թաքցրել են ընկերության շուրջ 1 130 000 000 ՀՀ դրամի շրջանառությունը, վաճառքներ իրականացնելիս դուրս չեն գրել հարկային հաշիվներ եւ չեն տրամադրել հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոններ, իսկ հարկային մարմին ներկայացված հաշվարկներում մտցրել են խեղաթյուրված տվյալներ:

Կատարված հարկային պարտավորությունների հաշվարկի համաձայն՝ հիշյալ ժամանակահատվածում պետական բյուջե չի վճարվել առանձնապես խոշոր չափերով՝ շուրջ 358 000 000 ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկ եւ շահութահարկ:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում նախաձեռնվել է նոր քրեական վարույթ:

Նախաքննությամբ ձեռք բերված անհերքելի փաստերի ներքո «Պ.Ֆ.» ՍՊ ընկերության տնօրենն ընդունել է առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու հանգամանքը եւ ամբողջությամբ պետական բյուջե է վերականգնել նախկինում չվճարված հարկի գումարը եւ հաշվարկված տույժերը, որոնք ընդհանուր կազմել են շուրջ 413.000.000 ՀՀ դրամ»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՄԵՔԵՆԱ Է ԱՅՐՎԵԼ

Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն դեկտեմբերի 8-ին՝ ժամը 07:46-ին, ահազանգ է ստացվել, որ Հյուսիսային ավտոկայարանի մոտակայքում այրվում է ավտոմեքենա:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայությունը:

Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ Opel մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից, գլորվել եւ բռնկվել:

Մինչ փրկարարների կանչի վայր հասնելը 3 տուժած տեղափոխվել է բժշկական կենտրոն:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 08:01-ին, մարվել՝ 08:19-ին: Այրվել է ավտոմեքենան:

ԿԱՐԵՎՈՐ

ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է ՀԻՎԱՆԴԱՆՈՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Մալաթիայից «Աստղիկ» բժշկական կենտրոն կրծքավանդակի հատվածում վիրավորում ստացած մի տղամարդ է տեղափոխվել: 24-ամյա երիտասարդը հրաժարվում է հրազենային վնասվածքի վերաբերյալ հայտնել:

Իրավապահներն այս պահին վարչական շրջանում ստուգումների գործընթաց են սկսել դեպքի հանգամանքները պարզելու համար:

ԳՈՐԾԸ ԿԱՐՃՎԵՑ

Երեկ «Մեդիա» կենտրոնում տեղի ունեցավ քննարկում՝ «Հայաստանում երաշխավորվա՞ծ է մարդու իրավունքների պաշտպանությունը? 2023-ի ամփոփում» թեմայով: Քննարկման ժամանակ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ ղեկավար Արաքս Մելքոնյանը նշեց, որ Եռաբլուրում 44-օրյա պատերազմի ժամանակ զոհված զինծառայողների ծնողների նկատմամբ ոստիկանների կողմից բռնություն կատարելու գործը կարճվել է:

Հիշեցնենք, որ 2022 թվականի սեպտեմբերի 21-ին «Եռաբլուր» զինվորական պանթեոնից 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների 40 ծնող էր բերման ենթարկվել, ոստիկանները բռնություն կիրառելով էին նրանց բերման ենթարկել, քաշքշել, վնասվածքներ պատճառել:

Բանակի մեքենան վաճառեցին

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Էռնեստ Սահակյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2020 թվականի սեպտեմբերի 28-ից Ռաֆայել Բեգլարի Բարսեղյանի հետ ներգրավված լինելով Արցախի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին եւ գտնվելով ԱՀ Հոռաթաղ գյուղի մերձակայքում, 2020 թվականի հոկտեմբերի 1-ից մինչեւ 2020 թվականի հոկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածում, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու շուրջ նախնական համաձայնության գալով, գաղտնի հափշտակել են Հոռաթաղ գյուղի զորամասի պարսպից դուրս կայանված, Վիտալի Ռոբերտի Կարապետյանին պատկանող եւ ԱՀ պաշտպանության բանակին հատկացված «??? 396252» մակնիշի, XTT396252D0483927 նույնականացման համարով, 35MN852 համարանիշի ավտոմեքենան, այնուհետեւ այն տեղափոխել են Երեւան քաղաք, իսկ 2020 թվականի նոյեմբերի 1-ին 1000 ԱՄՆ դոլար գումարով վաճառել Երեւան քաղաքի բնակիչ Հրաչյա Հենրիկի Սարգսյանին՝ Վիտալի Ռոբերտի Կարապետյանին պատճառելով խոշոր չափի՝ 2.700.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝դեկտեմբերի 7-ից 8-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 61 դեպք, որոնցից 5-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՉԿԱ

Նախկինում Տավուշի մարզպետները ամեն ամիս մարզի Դիլիջանի, Նոյեմբերյանի, Բերդի տարածաշրջաններում քաղաքացիների ընդունելություն էին կատարում, լսում նրանց խնդիրները, ըստ հնարավորի՝ լուծում տալիս դրանց: 2021թ. ապրիլի 8-ից որպես Տավուշի մարզպետ պաշտոնավարող Հայկ Ղալումյանին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկատվական հարցում է ուղարկել՝ նրանց հարցնելով՝ որպես Տավուշի մարզպետ՝ Բերդ, Դիլիջան, Նոյեմբերյան համայնքներում ինչ ժամանակացույցով է քաղաքացիների ընդունելություն կատարում, վերջին անգամ այդ համայնքերում երբ է քաղաքացիների ընդունելություն կատարել: Տավուշի մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Կապված ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի կանոնադրության փոփոխության հետ՝ փոփոխություններ են կատարվում նաեւ ներքին կանոնակարգերում, այդ թվում՝ նաեւ քաղաքացիների ընդունելության կանոնակարգն է թարմացվում, եւ այս պահին դեռեւս ֆիքսված ժամանակացույց չկա: Սակայն քաղաքացիներին բոլոր բնակավայրերից, ըստ անհրաժեշտության, մարզպետի աշխատակազմում, համայնքապետարանների աշխատակազմում հերթագրում են, եւ ՀՀ Տավուշի մարզպետը նրանց ընդունում է կամ մարզպետարանում, կամ բնակավայրերում, որոնցում հաճախակի է լինում աշխատանքային այցերով»:

ԴԻԼԻՋԱՆԻ ՀՈՂԵՐԸ՝ ԵՐԵՎԱՆՑԻՆԵՐԻՆ

Դիլիջան քաղաքի բազմաթիվ բնակիչներ հայտնել են, որ իրենք համայնքապետարան են դիմել տնամերձ կամ այլ հողամաս ստանալու խնդրանքով, համայնքապետարանում ասել են, որ քաղաքում ազատ հողամասեր չկան: Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանը շարունակում է Դիլիջան քաղաքի հողերն օտարել Երեւանի բնակիչների: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքից տեղեկանում եմ, որ Դիլիջան համայնքի ղեկավար Դ. Սարգսյանի՝ 2023թ. նոյեմբերի 1-ի թիվ 978-Ա որոշմամբ՝ 2023թ. դեկտեմբերի 4-ին աճուրդի է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 1942 քառակուսի մետր մակերեսով հողամաս (Լոտ-71 (ՔՀ-23)) Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոց, թիվ 14/2 հասցեում բնակելի տան կառուցման նպատակով 13594000 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 14273700 դրամ առավելագույն գնով հաղթել է Երեւան քաղաքի Մուշ թաղամասի թիվ 57/1 տան բնակիչ Ռոման Ուզունյանը, որի մասին Դիլիջան համայնքի հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 11 արձանագրությունը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՅՏԱՐԱՐԵՑԻՆ

32 ԳԵՐԻ ԿՎԵՐԱԴԱՌՆԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Դեկտեմբերի 7-ի երեկոյան Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահի վարչակազմը համատեղ հայտարարություն են տարածել:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրին ՀՀ վարչապետի աշխատակազմից, հայտարարության մեջ նշված է. «Հայաստանի Հանրապետությունը եւ Ադրբեջանի Հանրապետությունը համակարծիք են, որ տարածաշրջանում վաղուց սպասված խաղաղության հասնելու պատմական հնարավորություն կա: Երկու պետությունները վերահաստատում են ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության սկզբունքների հարգման հիման վրա հարաբերությունները կարգավորելու եւ խաղաղության պայմանագրի կնքմանը հասնելու իրենց մտադրությունը:

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահի վարչակազմի միջեւ բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել երկու պետությունների միջեւ վստահության կառուցման ուղղությամբ շոշափելի քայլեր ձեռնարկելու մասին:

Առաջնորդվելով մարդասիրության արժեքներով, եւ, որպես բարի կամքի դրսեւորում, Ադրբեջանի Հանրապետությունն ազատ է արձակում 32 հայ զինծառայողների:

Հայաստանի Հանրապետությունն իր հերթին, առաջնորդվելով մարդասիրության արժեքներով, եւ, որպես բարի կամքի դրսեւորում, ազատ է արձակում 2 ադրբեջանցի զինծառայողների:

Որպես բարի կամքի քայլ՝ Հայաստանի Հանրապետությունն իր աջակցությունն է հայտնում ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի մասնակիցների կոնֆերանսի 29-րդ նստաշրջանը («COP29») հյուրընկալելու նպատակով Ադրբեջանի Հանրապետության ներկայացրած հայտին եւ հանում է իր թեկնածությունը: Հայաստանի Հանրապետությունը եւ Ադրբեջանի Հանրապետությունը հույս են հայտնում, որ Արեւելյան Եվրոպայի խմբի մյուս պետությունները նույնպես կաջակցեն հյուրընկալելու նպատակով Ադրբեջանի Հանրապետության ներկայացրած հայտին: Որպես բարի կամքի քայլ՝ Ադրբեջանի Հանրապետությունն իր աջակցությունն է հայտնում Արեւելյան Եվրոպայի խմբի «COP»-ի բյուրոյին անդամակցելու համար առաջադրված Հայաստանի Հանրապետության թեկնածությանը:

Հայաստանի Հանրապետությունը եւ Ադրբեջանի Հանրապետությունը կշարունակեն իրենց քննարկումները վստահության կառուցման ավելի շատ միջոցառումների իրականացման վերաբերյալ՝ մոտ ապագայում կյանքի կոչելու համար, եւ կոչ են անում միջազգային հանրությանը՝ աջակցելու իրենց ջանքերին, որոնք կնպաստեն երկու պետությունների միջեւ փոխադարձ վստահության կառուցմանը եւ դրական ազդեցություն կունենան Հարավային Կովկասի ողջ տարածաշրջանի համար»:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԵՑՎԵԼ Է

«Սիսմուր» ՍՊԸ-ին պատկանող գազավորված ըմպելիքների արտադրամասում ստուգման ընթացքում ՀՀ սննամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արարատի մարզային կենտրոնի տեսուչները պարզել են, որ այն գործում է իրավական ակտերով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերի խախտումներով (Արարատի մարզ, գ. Արեւշատ):

Մասնավորապես՝

- չի իրականացվել տեխնիկական սարքավորումների անհրաժեշտ տեխնիկական սպասարկում եւ ընթացիկ վերանորոգում, արտադրական շինությունների մաքրում, լվացում եւ ախտահանում,
- արտադրական շինության պատերի եւ հատակի մակերեւույթները պատրաստված չեն եղել անջրանցիկ, լվացվող նյութերից,
- չի կանխարգելվել կեղտի կուտակումը, բորբոսի առաջացումը եւ մասնիկների թափվելու հնարավորությունն ու խոնավության խտացումը,
- բոլոր գործիքները, պարագաները կառուցված չեն եղել հիգիենայի պահանջները բավարարող նյութերից եւ չեն պահվել նորոգ ու բարվոք վիճակում, չեն ենթարկվել պատշաճ մաքրման ու ախտահանման,
- չի ապահովվել կրծողների եւ միջատների արտադրական շինություններ ներթափանցումից պաշտպանությունը, չի իրականացվել դրանց ոչնչացման գործընթաց,
- ապահովված չի եղել ձեռքերը լվանալու համար նախատեսված լվացարաններով, ինչպես նաեւ լվանալու եւ չորացնելու համար նախատեսված միջոցներով,
- սննդի կառույցն ապահովված չի եղել անձնակազմի համար հանդերձարանով,
- սննդի շղթայում ներգրավված աշխատակիցները չեն ենթարկվել պարտադիր նախնական եւ պարբերական բժշկական զննությունների,
- սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցը չի ունեցել սանիտարական անձնագիր:

Գազավորված ըմպելիքների արտադրամասի արտադրական գործունեությունը կասեցվել է, սահմանվել է ժամկետ հայտնաբերված խախտումները վերացնելու համար:

ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

2023 թվականի նոյեմբերի 1-ից նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ է ներմուծվել եւ տեսչական մարմնի կողմից զննվել եւ/կամ փորձաքննության է ենթարկվել սննդամթերքը.

միս-մսամթերք -778865.632 կգ,
կաթ-կաթնամթերք - 542291.022 կգ,
ձուկ-ձկնամթերք -186647.95 կգ,
թռչնամիս - 1013253.288 կգ,
պահածոյացված սննդամթերք - 1668724.46 կգ,
հրուշակեղեն եւ հումք - 1479719.391 կգ,
մանկական սնունդ - 41312.74 կգ,
ալկոհոլային խմիչք - 1758855.026 կգ,
ոչ ալկոհոլային խմիչք - 2453754.267 կգ,
բուսական յուղ եւ բուսական ծագման վերամշակված սննդամթերք - 540117.312 կգ,
բույսեր, տնկանյութ, սերմեր եւ սերմացուներ - 682842.4357 կգ,
թարմ եւ չոր պտուղներ - 11177874.5 կգ,
թարմ եւ չոր բանջարեղեն - 1719234.93 կգ,
ցորեն եւ այլ հացահատիկներ - 25060 կգ,
բրինձ - 567972 կգ,
ցորենի կամ այլ հացահատիկի ալյուր - 35070 կգ,
սուրճ - 1140691.792 կգ,
թեյ - 12946.812 կգ,
այլ սննդամթերք - 2335593.429 կգ:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ճՏՊ. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԻՐԱՎԱՐՁԱՅԻՆ

ՏՈՒՐՔԵՐ՝ ՏԱՔՍԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2024 թվականի սեպտեմբերից Հայաստանում կսահմանվեն տուրքեր առցանց տաքսիների համար: Այս մասին Ազգային ժողովի նիստում «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու, իսկ հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրինագծերի փաթեթի երկրորդ եւ վերջնական ընթերցմամբ քննարկման ժամանակ՝ դեկտեմբերի 8-ին, հայտարարեց ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների փոխնախարար Արմեն Սիմոնյանը: Նրա խոսքով՝ էլեկտրոնային հարթակների միջոցով ուղեւորափոխադրումների կազմակերպման ոլորտը ներկայումս շատ լայն տարածում ունի, սակայն դա ոչ մի կերպ չի կարգավորվում կամ վերահսկվում: «Նոր օրենսդրական նախաձեռնության շրջանակներում կկարգավորվի էլեկտրոնային հարթակների միջոցով տաքսիների պատվերներ ընդունող կամ վերաբաշխող կազմակերպությունների եւ անհատ ձեռնարկատերերի գործունեությունը: Այն կնշանակվի որպես ծանուցում պահանջող գործունեություն: Մասնավորապես, առաջարկվում է սահմանել տարեկան 1 մլն դրամ պետական տուրք»,- ասաց Սիմոնյանը: Բացի սրանից, առցանց պատվիրված յուրաքանչյուր տաքսի-փոխադրման համար առաջարկվում է գանձել վճար՝ անկանխիկ վճարման համար՝ 1,5% (2025 թվականից՝ 2,5%, 2026 թվականից՝ 4%): Կանխիկ վճարման դեպքում 2024 թվականի սեպտեմբերի 1-ից տուրքը կկազմի 2%, 2025 թվականից՝ 3,5%, իսկ 2026 թվականից՝ 5%: Պահանջ կլինի նաեւ տաքսիներում ՀԴՄ-ներ ունենալ եւ էլեկտրոնային կտրոն տրամադրել: Եթե վերը նշված պահանջները չկատարվեն, կկիրառվեն վարչական տույժեր:

ՏՈՒԳԱՆՔՆԵՐԸ՝ ԿԲԱՐՁՐԱՆԱՆ

Հայաստանում նախատեսվում է ինքնակամ շինություններ կառուցելու համար նախատեսված տուգանքի չափերը բարձրացնել:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը երկրորդ ընթերցմամբ ընդունելու համար ԱԺ նիստում ներկայացրեց Արդարադատության նախարարի տեղակալ Արմենուհի Հարությունյանը:

«Առաջարկվում է ինքնակամ կառույցների իրականացման համար տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի 500-1000-ապատիկի չափը բարձրացնել 750-1500-ապատիկի: Նույն արարքը հողօգտագործման իրավունք չունեցող անձի կողմից պետությանը, համայնքներին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա կատարելու համար սահմանված տուգանքը բարձրացնել՝ դարձնելով նվազագույն աշխատավարձի 2000-2500-ապատիկը: Եվ նշված արարքները վարչական տույժ նշանակելու օրվանից հետո շարունակելու համար տուգանքը բարձրացնել մինչեւ 2500-3000-ապատիկը»,-ներկայացրեց փոխնախարարը: 2020-2023թթ ընթացքում վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ նշված հոդվածներով կայացվել է 4673 որոշում, որից 3427-ը՝ Երեւանում, 1246-ը՝ մարզերում:

ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ Է ՍՏԱՑԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ըստ Համաշխարհային բանկի հայտարարության՝ Հայաստանն ընտրվել է «Պետության եւ խաղաղության կառուցման հովանոցային հիմնադրամի» նոր դրամաշնորհ ստանալու համար՝ երկրի 200 -ից ավելի դպրոցներում Լեռնային Ղարաբաղի շրջանից տեղահանված երեխաների եւ դեռահասների հոգեկան առողջությանը եւ հոգեֆիզիկական վիճակին օժանդակելու համար: Դրամաշնորհով ֆինանսավորվելու է Համաշխարհային բանկի եւ «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամի կողմից առաջիկայում համատեղ իրականացվելիք ծրագիրը՝ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի եւ Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի հետ համագործակցությամբ:

2.9 միլիոն դոլար դրամաշնորհային գումարը կուղղվի Հայաստանի դպրոցներում տեղահանված երեխաների եւ դեռահասների սոցիալական ինտեգրմանը եւ դպրոցների անձնակազմի կարողությունների զարգացմանը եւ մենթորինգին՝ տեղահանված երեխաներին եւ դեռահասներին, նրանց ընտանիքներին եւ ընդունող (հյուրընկալող) համայնքների աշակերտներին հոգեկան առողջության եւ հոգեբանասոցիալական համապատասխանեցված աջակցության տրամադրման համար:

Դրամաշնորհային ծրագիրը կօժանդակի նաեւ նոր ուսումնական ծրագրում հոգեկան առողջության եւ հոգեբանասոցիալական աջակցության տրամադրման ինտեգրմանը:

«Պետության եւ խաղաղության կառուցման հովանոցային հիմնադրամը» (State and Peacebuilding Umbrella Trust Fund) Համաշխարհային բանկի կողմից կառավարվող բազմադոնորային գլոբալ հիմնադրամ է, որը գործընկերների հետ աշխատում է փխրունության, հակամարտության եւ բռնության դրդապատճառներին եւ ազդեցություններին անդրադառնալու եւ երկրների եւ ազդակիր բնակչությունների, համայնքների եւ կառույցների դիմակայունությունը բարձրացնելու ուղղությամբ: Հիմնադրամին աջակցում են Դանիան, Գերմանիան, Նիդերլանդները, Նորվեգիան, Շվեդիան, Շվեյցարիան:

Հավելենք, որ Համաշխարհային բանկը ներկայումս Հայաստանում ֆինանսավորում է 500 միլիոն ընդհանուր արժեքով 10 ծրագիր: Հայաստանում 1992թ.-ին՝ իր գործունեության սկզբից ի վեր, Համաշխարհային բանկը շուրջ 2.7 միլիարդ դոլար է տրամադրել Միջազգային զարգացման ընկերակցությունից (ՄԶԸ), որի դոնոր Հայաստանը դարձավ 2023 թ.-ին, Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկից (ՎԶՄԲ) եւ հավատարմագրային հիմնադրամներից: Համաշխարհային բանկը հանձնառու է շարունակելու իր աջակցությունը Հայաստանի զարգացման ուղուն՝ վերջ դնելու ծայրահեղ աղքատությանը եւ խթանելու ընդհանուր բարգավաճումը ապրելու մոլորակի վրա:

ՏՎՅԱԼՆԵՐ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԳԵՐԻՆԵՐԸ

Երեկ կառավարությունից հայտնեցին, որ, Փաշինյանի եւ Ալիեւի պայմանավորվածության համաձայն, Ադրբեջանն ազատ կարձակի 32 հայ զինծառայողի, Հայաստանը՝ 2 ադրբեջանցի զինծառայողի: Ըստ հայտարարության՝ վերադարձվողների մեջ Արցախի ո՛չ ներկա եւ ո՛չ նախկին պաշտոնյաներից ոչ մեկ չկա:

Ավելի ուշ հրապարակվեց նաեւ Հայաստան վերադարձվող գերիների անունները:

«Նոր Հայաստան Հայրենիք-Սփյուռք» բարեգործական ՀԿ հիմնադիր նախագահ Գեւորգ Ռուբենի Սուջյանն ու ընկերը՝ Դավիթ Տիգրանի Դավթյանը, հրադադարից հետո գերեվարվել էին ադրբեջանցիների կողմից: Նրանց մեղադրել էին լրտեսության մեջ, իբրեւ, համագործակցում էին Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության հետ: Բաքվի ծանր դատարանում էլ հայ գերիներին շինծու մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 228-րդ (զենքի ապօրինի պահում), 279-րդ (զինված խմբերի ստեղծում), 318-րդ (պետական սահմանի անօրինական հատում), 276-րդ (լրտեսություն) հոդվածներով եւ դատապարտել էին 15 տարվա ազատազրկման:

Հիշեցնենք, որ Գեւորգ Սուջյանը պատերազմի օրերին ընկերների հետ միասին օգնություն էր տեղափոխում Արցախ: Այդ օրը Սուջյանն ընկերոջ՝ Դավիթի հետ ցանկանում էր մեկնել Արցախ՝ տեղում ծանոթանալու իրավիճակին: Մի քանի օր նրանցից տեղեկություն չունենալով՝ Սուջյանի մտերիմները ու ընկերները սոցիալական ցանցերում անընդհատ ահազանգում էին նրանցից լուր չունենալու մասին: Միայն երկու օր անց՝ նոյեմբերի 13-ին, ադրբեջանական սոցցանցերում տարածված տեսանյութից ընկերները ճանաչել են Սուջյանին ու Դավիթին: Նրանց գերեվարել էին 2020թ. նոյեմբերի 11-ին Բերձոր-Շուշի ճանապարհին:

Տարածված անվանացանկի համաձայն՝ Հայաստան է վերադարձվում նաեւ Սերոբ Սուրենի Ավագյանը:

Սերոբ Ավագյանի դատավարությունը կատարվել է Բաքվի ծանր դատարանում՝ դատավոր Էլդար Իսմայիլովի կողմից: Նրան մեղադրանք է առաջադրվել Ադրբեջանի քրեական օրենսգրքի 214, 228, 279, 318 հոդվածներով, եւ նա դատապարտվել է 6 տարի ազատազրկման: Նրան առաջադրվել էր մեղադրանք «ահաբեկչության եւ դիվերսիայի համար»: Ըստ ադրբեջանական կողմի՝ հրադադարից հետո՝ նոյեմբերի 26-27-ը, հատել են «Ադրբեջանի պետական սահմանն ու Հադրութի հյուսիս-արեւմտյան հատվածի անտառային տեղանքում մարտական դիրքեր զբաղեցրել, այնուհետեւ՝ մինչ դեկտեմբերի 13-ը, զինված հարձակումներ իրագործել»:

Նշենք, որ Սերոբ Ավագյանը գերեվարվել էր 2020 թվականի դեկտեմբերին Հադրութի շրջանում:

Հավելենք, սակայն, որ հրապարակված ցուցակները ճշգրտված չեն, հայկական կողմից դեռ հաստատումներ չկան այն անունների, որոնք հրապարակել են ադրբեջանական լրատվամիջոցները:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀԱՅՏ

«ԳՅՈՒՄՐՈՒ ԴԱՐԲՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ»՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ՈՒՄ

Քոսովանայի Կասանե քաղաքում տեղի է ունեցել ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի 18-րդ միջկառավարական նստաշրջանը, որի ընթացքում գրանցվել է Հայաստանի Հանրապետության 8-րդ՝ «Գյումրու դարբնության ավանդույթը» հայտը:

Տարրը վերաբերում է Գյումրի քաղաքում դարբնության ավանդույթը պահպանող եւ սերնդեսերունդ փոխանցող արհեստավոր ընտանիքներին, անհատ դարբիններին, դարբնությունը որպես կիրառական արվեստ-արհեստի ճյուղ դասավանդող մասնագիտական կրթական հաստատություններին, գեղարվեստական դարբնության նմուշները որպես քաղաքային մշակույթի յուրահատուկ տարր պահպանող ու ցուցադրող թանգարաններին, Գյումրի քաղաքի արհեստագործական ավանդույթների պահպանմամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին եւ լայն առումով Գյումրի քաղաքի բնակիչներին, որոնք մինչ օրս պահպանում են դարբնոցում վարպետների պատրաստած իրեր պատվիրելու եւ գործածելու ավանդույթը:

Հատկապես կարելի է առանձնացնել Պապոյանների, Մարտիրոսյանների, Մնոյանների ընտանիքները, որոնք արդեն 5-6 սերունդ պահպանում ու փոխանցում են դարբնությունը ընտանիքում՝ պապից՝ հորը, եւ հորից՝ որդուն:

«Գյումրու դարբնության ավանդույթը» հայտը պատրաստվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության նախաձեռնությամբ եւ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի խորհրդատվական աջակցությամբ: Հայտի պատրաստմանը մասնակցել են ՀՀ Շիրակի մարզպետարանը եւ քաղաքապետարանը, դարբիններ Գարիկ Պապոյանը, Գագիկ Մարտիրոսյանը, Հովհաննես Մնոյանը, «Եռանկյունի» դարբնոցը, «Գյումրու Ժողովրդական ճարտարապետության եւ քաղաքային կենցաղի թանգարան» եւ «Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ները, «Կումայրի պատմամշակութային արգելոց թանգարան» ՀՈԱԿ-ը, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղը, «Սրբազան հող» եւ «Քաղաքային ուսումնասիրությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունները:

«Գյումրու դարբնության ավանդույթը» հայտի գրանցումը ՅՈՒՆԵՍԿՕ-ում կարեւոր իրադարձություն է Գյումրի քաղաքի մշակույթի արժեւորման ուղղությամբ, մասնավորապես՝ արհեստագործության այնպիսի ճյուղի, ինչպիսին դարբնությունն է:

Տարրի գրանցումը ցանկում մեկ անգամ եւս արժեւորում է Գյումրի համայնքը, տոհմիկ դարբինների վարպետությունն ու գիտելիքը: Այն կնպաստի դրանց զարգացմանն ուղղված նոր գաղափարների ու ծրագրերի իրականացմանը՝ բարձրացնելով դարբնության միջազգային ճանաչելիությունը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՍՈՒԱՐԵՄ ՈՒ «ՈՍԿԵ ԳՆԴԱԿԸ»

Ուրուգվայցի Լուիս Սուարեսն արժանացել է Բրազիլիայի ավարտված առաջնության լավագույն ֆուտբոլիստի «Ոսկե գնդակ» մրցանակին. հաղորդում է «Գրեմիոյի» մամուլի ծառայությունը:

36-ամյա ֆուտբոլիստն առաջնության 33 խաղում դարձել է 17 գոլի եւ 11 գոլային փոխանցման հեղինակ: «Գրեմիոն» դարձել է երկրի փոխչեմպիոն:

Այս տարվա հունվարին «Գրեմիոյին» միացած Լուիս Սուարեսը չի երկարաձգել պայմանագիրը եւ այս ամիս կհեռանա ակումբից:

Սպասվում է, որ հունվարին Լուիս Սուարեսը կմիանա ամերիկյան «Ինտեր Մայամիին»:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԸ

Բրիտանական Daily Mail-ը կազմել է «Մանչեսթեր Յունայթեդի» լավագույն ֆուտբոլիստների տասնյակը Անգլիայի Պրեմիեր լիգայում դարաշրջանում:

Առաջին տեղում է Ռայան Գիգզը, երկրորդ տեղում՝ Փոլ Սքոուլզը, երրորդ տեղում՝ Ուեյն Ռունին:

Տասնյակում են նաեւ Կրիշտիանու Ռոնալդուն, Ռոյ Քինը, Էրիկ Կանտոնան, Պետեր Շմեյխելը, Ռիո Ֆերդինանդը, Դեւիդ Բեքհեմը եւ Էնդի Քոուլը:

ՌՈՒՆԻՆ՝ ԲԵԼԻՆԳԵՄԻ ՄԱՍԻՆ

Անգլիայի հավաքականի, «Էվերտոնի» եւ «Մանչեսթեր Յունայթեդի» նախկին ֆուտբոլիստ, անգլիական «Բիրմինգեմ Սիթիի» գլխավոր մարզիչ Ուեյն Ռունին հիացմունքով է խոսել Անգլիայի հավաքականի եւ Մադրիդի «Ռեալի» 20-ամյա կիսապաշտպան Ջուդ Բելինգեմի մասին:

«Հրաշալի է տեսնել, թե անգլիացի ֆուտբոլիստն ինչքան լավ է խաղում այլ երկրում: Բելինգեմը համարձակ գործեց՝ իրեն հրաշալի դրսեւորելով Գերմանիայում, հիմա էլ խաղում է աշխարհի խոշորագույն ակումբներից մեկում: Ջուդը շատ վառ է փայլում: Ես ուրախ եմ նրա համար: Հույս ունեմ, որ Բելինգեմը կպահպանի այս ռիթմը մինչեւ «Եվրո-2024»-ը եւ կօգնի հավաքականին հասնել հաջողության:

Եթե նա շարունակի այսպես հանդես գալ, կարող է հավակնել նաեւ «Ոսկե գնդակի»: Մենք անցանք Մեսիի եւ Ռոնալդուի շրջափուլը: Նրանք գերիշխում էին անհատական մրցանակների տեսանկյունից: Հիմա Բելինգեմի հետ կարող է պայքարել 5-6 խաղացող: Նա կլինի առաջատար դիրքում, եթե շարունակի այսպես»,- Ռունիի խոսքը մեջբերում է Sky Sports-ը:

Բելինգեմն արժանացել է այս տարվա Եվրոպայի լավագույն երիտասարդ խաղացողի Golden Boy մրցանակին

ԴԱՐՁԵԼ Է ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ն ակումբային բաժնետոմսերի 12,5 տոկոսը վաճառել է ամերիկյան Arctos Partners ընկերությանը. հաղորդում է ակումբի մամուլի ծառայությունը: ft.com-ի տվյալներով՝ գործարքի գումարը հաշվարկելիս ակումբի 100 տոկոս բաժնետոմսերի ընդհանուր արժեքը գնահատվել 4,25 միլիարդ եվրո:

Arctos Partners-ն ազդեցություն չի ունենա ակումբի զարգացման ռազմավարության վրա: Այն կկենտրոնանա կանանց թիմի եւ ակումբի ենթակառուցվածքային վերակառուցման վրա:

Arctos Partners-ը ներդրումներ ունի նաեւ «Լիվերպուլում», «Ատալանտայում», «Պորտլենդում», «Ռեալ Սոլթ Լեյքում», «Յուտայում», հոկեյի «Տամպա Բեյ», «Մինեսոտա», «Նյու Ջերսի», «Պիտսբուրգ», բասկետբոլի «Գոլդեն Սթեյթ», «Սակրամենտո», «Յուտա», «Ֆիլադելֆիա» ակումբներում:

ԺԱՄԱՆՑ

ՍԵԼԵՆԱ ԳՈՄԵՍԻ ՍԻՐԵԼԻՆ

Սելենա Գոմեսը սիրավեպ է սկսել պրոդյուսեր Բենի Բլանկոյի հետ: 31-ամյա երգչուհին Instagram-ի էջի Stories բաժնում հաստատել է, որ հանդիպում է Բլանկոյի հետ:

Երբ Instagram-ի @popfactions էջը տեղեկացրեց, որ Գոմեսը «ըստ երեւույթին» հաստատել է, որ հարաբերությունների մեջ է Բլանկոյի հետ: Երգչուհին մեկնաբանություններում գրել է՝ «Փաստեր»: Մեկնաբանությունից մի քանի ժամ անց Գոմեսը կիսվել է մի տղամարդու հետ լուսանկարով, որը նման է Բլանկոյին:

Բայց պատմությունն այսքանով չի ավարտվում. Գոմեսը նաեւ արձագանքել է իր երկրպագուների մեկնաբանություններին՝ պաշտպանելու Բլանկոյի հետ իր հարաբերությունները, որոնք, ըստ նրա, շարունակվում են արդեն վեց ամիս: Իսկ երբ որոշ հետեւորդներ նրան «արժանի» չեն համարել երգչուհուն, Գոմեսը նշել է, որ Բլանկոյի հետ սիրավեպը «լավագույն բանն է, որ երբեւէ պատահել է իր հետ»:

Խոսակցություններն այն մասին, որ Սելենա Գոմեսը եւ Բենի Բլանկոն հանդիպում են, սկսվել են մի քանի շաբաթ առաջ, երբ երկրպագուները նկատել են, որ նրանք հաճախ են շփվում միմյանց հետ սոցիալական ցանցերում:

Իսկ Գոմեսի մայրը՝ Մենդի Թիֆին, վերջերս նրան սկսել է հետեւել Instagram-ում:

ՖՐԱՆՍԻԱՆ ՈՒ ՀԱՅ ԿԱՆԱՅՔ

Ֆրանսիական Marie Claire ամսագիրը հայ կանանց մասին նյութ է հրապարակել: Շուրջ վեց էջ նվիրված է Հայաստանի համար դժվարին ժամանակներում դիմադրություն ցուցաբերող մեր հայրենակիցներին:

Լրագրություն, իրավունք, մշակույթ, բիզնես, խոհարարություն, ինչպես նաեւ գոյատեւելու արվեստ. այս բոլոր ոլորտներն ակտիվորեն զարգացնում են վեց հայ կանայք: Նրանց ծրագրերը, ինչպես նաեւ գործունեությունը ուղղակիորեն ազդում են արցախցի իրենց հայրենակիցների կյանքի վրա:

Հունվարի թողարկման հերոսուհիներն են արցախցի լրագրող Սիրանուշ Սարգսյանը, ում՝ ադրբեջանական «հակաահաբեկչական գործողության» մասին տեսանյութը առաջին օրերին տարածվեց սոցցանցերում, Շուշան Քեշիշյանը, որը HubArtsakh-ի ղեկավարն է, լիբանանահայ խոհարար Ալին Քամաքյանը, որը Բեյրութում «Մայրիգ» ռեստորանի հիմնադիրն է, Անուշ Բաղդասարյանը, որը rerooted նախագծի հիմնադիրն է, Նաիրի Խաչատուրյանը՝ արվեստի համադրող եւ AHA Collective-ի հիմնադիր, ինչպես նաեւ Աշխեն Վարդանյանը, որը հաճախում է ՈՄԱ կենտրոն, որտեղ սովորեցնում են գոյատեւման արվեստը:

Տեքստը պատրաստել է Քարտին Դյուրանդը: Լուսանկարներն արվել են Ռեբեկա Թոփաքյանի կողմից:

Համարը կարելի է ձեռք բերել ինչպես առցանց, այնպես էլ տպագիր տարբերակով:

● Դեկտեմբերի 10-ին Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնում տեղի կունենա «Դասը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ընդհանուր տիպի տուն-ինտերնատ ընդունվելու համար սոցիալական աջակցության տարածքային մարմին ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնի քաղաքացին:

Սերինե Հայրապետյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 25-ի N1112-Ն որոշման՝ փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային մարմին պետք է ներկայացնել՝

-անձնագիր կամ նույնականացման քարտ,

-նույնականացման քարտ չունենալու դեպքում՝ բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից տեղեկանքի տեսքով հատկացված հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք, իսկ դրանց բացակայության դեպքում՝ սոցիալական քարտ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանք,

-խնամքի տրամադրում հայցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ հանդիսանալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթ (կացության քարտ), իսկ փախստականի կարգավիճակ ունենալու դեպքում՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ,

-հաշմանդամության վերաբերյալ տեղեկանք՝ տրված բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող մարմնի կողմից, եթե անձը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է որպես հաշմանդամություն ունեցող անձ,

-անձի բժշկական քարտը՝ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի ու առողջապահության նախարարի համատեղ հրամանով հաստատված ձեւին համապատասխան, կամ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112 -Ն որոշման N 3 հավելվածի հիվանդությունների ցանկում ներկայացված հիվանդություններով հիվանդ չլինելու հանգամանքը հիմնավորող փաստաթուղթ (փաստաթղթեր)՝ տրված համապատասխան բժշկական հաստատության (հաստատությունների) կողմից:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաճախորդին խնամք տրամադրվում է՝ սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի որոշման հիման վրա:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Երրորդ երկրներից ՀՀ տարածք ներմուծվող ծխախոտի արտադրանքի համար ներմուծման դեպքում ո՞րն է համարվում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն:

Տրդատ Հունանյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ ծխախոտի արտադրանքի ներմուծման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գինը՝ առանց ԱԱՀ-ի:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ երրորդ երկրներից ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց՝ օրենքով սահմանված կարգով որոշվող մաքսային արժեքի եւ գանձվող մաքսատուրքի ու ակցիզային հարկի գումարը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Արցախցի հայ լուսանկարիչ Դավիթ Ղահրամանյանի լուսանկարը ներառվել է Reuters-ի «2023 թվականի լուսանկարները եւ դրանց հետեւում գտնվող պատմությունները» շարքում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	0 - 2 + 5 + 8
Կոտայքի լեռներ	- 1 + 2 + 5 + 6
Կոտայքի նախալեռներ	+ 2 + 4 + 9 + 11
Գեղարքունիք	0 + 4 + 3 + 6
Լոռի	- 1 + 3 + 10 + 13
Տավուշ	+ 2 + 5 + 12 + 15
Արագածոտնի լեռներ	- 1 - 5 + 8 + 11
Արագածոտնի նախալեռներ	- 1 - 5 + 8 + 10
Արարատ	+ 3 + 6 + 9 + 11
Արմավիր	0 + 2 + 5 + 8
Վայոց ձորի լեռներ	0 + 2 + 5 + 8
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 6 + 9 + 11
Սյունիքի հովիտներ	+ 5 + 9 + 13 + 16
Սյունիքի նախալեռներ	+ 5 + 9 + 10 + 13
ԼՂՀ	+ 2 + 5 + 10 + 13
Երեւան	+ 3 + 5 + 8 + 10

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **8.12.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*